լոյ Նոցին ի ցիպ մամլոյն և երկոքումբք պանծացուցանել զանմոռանալի երկունս ամոլակից երանելեաց՝ Սահակայ և Մեսրոպայ և Նոցին աչակերտացն խմբի, թարգմանչաց՝ մշակացն անմահից, որոց ի պատիւ և ի յարգանս փութաց ազգս համօրէն ոտն կազմել տարեկանաց և հաճեցաւ Վեհափառ Տէրդ կանգնել ի գլուխ և քաջալերութիւն գործոյն։

Ի Նոցն իղձս ոգեւորեալ և խանդարտ որդիդ, ի զաւակաց վիճակին խնկելի նախարարցս, փութամ ամենախոնարհաբար առաջի արկանել առաջի սքոռոյ Ս. Օծութեանդ զաղերսս որդիական վասն բազմակարօտ և խոպանացեալ երկրին Տարօնոյ, երկնոցի Հայ Դպրութեան և լուսաւորութեան։

Զի ինչ անծանօթ Վեհափառ Տեառդդ թէ որպէս անգտանին ի վաղ ժամանակաց ընդաւառն մինչին Հայաստանի նահանգն Տուրուբերանի, հաւատարիմ և անձնանուէր առ ազգն և եկեղեցին՝ մատուցեալ է հայրենեաց զլուսացնցուղ և փառազարդ երամս զաւակաց՝ զՍահակ և զՄեսրոպ, զեղուեցեալս և Նեարինացիս, զՄանդակունիս և Նշեցիս, զվարդանեանս և զՎահանեանս, զդասս իմաստուն վարդապետաց և ընտրելագոյն իշխանաց մինչեւ յորոյոյ աշխարհին։— Երկիր զպրութեանց և երկիր զուցազանց։

Այլ, աւա՜ղ, զի մայրն զպրութեանց Տարօն ուր ցողեցին տաղք եւ տառք մայրենի, ուր ցոլացան լուսածաւալ երկունքն սակեզարու, ուր հնչեցին երգք Աստուածականք եւ զուցազնականք, գտանի ի սերկեւանս, յոդորմագին և յեղկելի վիճակի։

Խաթարեալ և խանդարեալ զան Սրբավայրի ոտնելի մշակացն, Մայր տաճարն Աշտիշատայ ժամանեալ է յաւեր, Իշնակնեան վանքն Ս. Կարապետի վաղնջական համազգային ուխտատեղին մերձ է ի քայքայումն։ Հին, հին ճրագք Դպրութեանց՝ անցեալք միտք խոպանացեալք, և բիւրաւոր ժանկտին ծարաւի լուսոյ և դաստիարակութեան։

Ո՛տացէ անբաղդ որդեկացդ Տարօնոյ՝ հնագոյն օրրանին հայրենեաց զլրումն ցանկալի տենչանացնու այսցիկ, եթէ ոչ Վեհափառութիւնն Ձեր, որ լի գորովով և դթով առ հօրդ սիրելի, վաստակի և ջանայ ի հոգս նորին։

Այո՛, առ Ձեզ են յառեալ այկունքն եկեղեցասէր և ուսումնասէր փոքու հօտիդ, ի հեռաւոր անկեանցն Տարօնոյ, ուր ոչ գտանի այժմ և ոչ իսկ ուսումնարան՝ մի երկրորդական կամ միջնակարգ, ոչ ի հայտնոյ դաշտին Տարօնոյ, ոչ ի գաւառս շրջակայս, ի Սասուն՝ ի Հարք, Յապահուներս, յԼարշամուներս, այլովք հանդերձ։

Վեհափառ Տէր, երեսուն և աւելի ամք են, ի լրումն ուսումնական այսր կաթուածութեան և յաղագս Գոնեայ՝ մասնակի նորոգութեանց նշխարեալ մասանց վկայարանաց՝ բազմապատիկք խնդիրք և աղերսք ուղղեցան ի Տարօնեցւոյս առ երջանկայիշատակ Նախորդս Ձեր, առ Տ. Տ. Գէորգ և Մակար, Մկրտիչ և Մատթէոս Կաթողիկոսունս, այլ զժպիղ հանգամանք ժամանակաց արգել եղին ի կատարումն զեղեցիկ առաջադրութեանց Նոցին։

Իսկ յայժմուս, շնորհազարդ Տէր, եկեալ հասեալ է քարեպատեհ ժամն, զի ի յաւերժացումն մեծի տօնիս, հաղանակութիւն ընդարձակ և բեղմնաւոր կատարի ամէն ուրեք, ըստ հրամանի պատուական Հայրապետին Ազգիս, ուստի աղաչեմ խոնարհաբար ի սէր յիշատակի սիրելի թարգմանչացն հանգուցեալց ի նուիրագործ և չիթեւափառ վկայարան Տարօնոյ, բարեհաճեցիք հրամայել, զի սահմանեսցի անտի բաւարար ժամն, ի հաստատութիւն և ի մտատանութիւն երկրորդական ուսումնարանի ի Վանս Դպրեայ Ս. Կարապետի և ի նորոգութիւն կործանեալ Մայր եկեղեցւոյ Աշտիշատայ և վանդեալ չինուածոց Ս. Կարապետի և թարգմանչաց վանօրէից, ի փառաւոր պանծացումս լուսահեղ Ջանից անզուգական երախտաւորաց՝ Սահակայ և Մեսրոպայ և ի սփոփանս բազմակարօտ ժողովրդեան առաւել քան զերեք հարիւր գիւղօրէից հարազատ և տառապեալ որդւոց ձերոց, որ կան ի Վիճակս Մարաղանիցն Ս. Կարապետի և վանօրէիցն՝ Եղբղուայ Ս. Յովհաննու, Տիրնկատարի թարգմանչաց, Սանոյ Մոլթայ և Հայեաց գրասենի։

Մաղթելով ի համբոյր Ս. աջոյդ հայրական մնամ

ԳԵՂԱՄ Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ազգ. Սեւափսան Տարօնոյ

10 օգոստ. ի 1913 ամի

Ի Կ. Պոլիս

ԵՐԻՍԱՆԷ ՍՏԱՆ

Ի ՅԻՇԵՐԺՈՒՅՈՒՄՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՅՈՐԵԼԵԱՆԻ

ԳԻՇԱՏԱԿԻՆ

Վեհափառ

եւ Շնորհազարդ Ս. Հայրապետ

Քաղցր են ապաքէն, Սիրեցեալ հօտիդ Հայկազնեան, մանաւանդ որոց կեանն և տքնին յաւերակս տոհմիկ Սրբութեանց, լսել և տեսանել թէ շնորհիւ օրհնաձիր հրամանագաց և հրամանաց Ձերդ Ս. օծութեան, որդիք Հայաստանեայց եկեղեցւոյ, որք հայրենաքանկք և որք վարանդիք՝ ի սփիւռս աշխարհաց՝ թաթաղուն զզացմամբ երախտագէտ սրտից զհետ են ոտնել զնաղար և հինգ հարիւրամեայ յիշատակն գլուխց հայ տառից, ընդ չորեքհարիւրամեայ յիշատակի մասանեաց։